ՄՈՆՊԵԼԻԵՅԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՍԵՄԻՆԱՐ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ԱՆՑԿԱՑՐԵԼ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ

25.10.2019 18:10

ՀՀ փաստաբանների պալատում Մոնպելիեյի փաստաբանների միության և Մոնպելիեյի փաստաբանների միությանը կից գործող մարդու իրավունքների հաստատության միջև համագործակցության շրջանակներում տեղի է ունեցել սեմինար-քննարկում՝ «Փաստաբանի արտահայտվելու ազատությունը. սահմանափակումները և դերը արդար քննության շրջանակներում» խորագրով:

Բացման խոսքերով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը և Մոնպելյեյի փաստաբանների միության նախագահ Ռեմի Լևին:

Քննարկմանը զեկուցումներով են հանդես եկել՝

- Մոնպելիեյի փաստաբանների միության նախկին նախագահ - Լյուք Կիրքյաչարյանը - անհատական մոտեցում և դեոնթոլոգիա,
- փաստաբան Ֆարիզա Թումին - Դեոնթոլոգիա. փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումները դրսևորվող վարքագծի շրջանակներում,
- փաստաբան Կլեռ Մագուելոն Լեռոյ - հակասելու սկզբունքը,
- փաստաբան Սելին Վիլա - փաստաբանի արտահայտվելու ազատության սահամանափակումը քաղաքացիական դատավարության շրջանակում,
- փաստաբան Մարի-Պոլ Կանիզարես - փաստաբանի արտահայտվելու ազատության սահամանափակումը քրեական դատավարության շրջանակում, փաստաբան Ժան-Լուք Վինքել - պայմանագրային կոնսենսուս և արբիտրաժի այլընտրանք:

Քննարկման ավարտից հետո հյուրերը շրջայց են կատարել Փաստաբանների պալատի, այդ թվում՝ Հանրային պաշտպանի գրասենյակի և փաստաբանական դպրոցի հարկաբաժիններում, ծանոթացել են տեխնիկական պայմաններին և հնարավորություններին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })